

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԹՐՓԱՆՃԵԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ»**

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի «Թրփանճեան Գյուղական Համայնքների Զարգացման Ծրագրի» կողմից ամեն տարի մարզի տարբեր համայնքներում իրականացվում են համայնքների զարգացման մի շարք ծրագրեր:

Միայն 2014թ. հիմնադրամի կողմից մարզի 11 գյուղական համայնքներում բացվել են հացի և լավաշի, կահույքի արտադրամասեր, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կետ, մթերային եվ շինարարական ապրանքների խանութներ՝ ապահովելով 33 նոր աշխատատեղեր համայնքների բնակիչների , իսկ Կամո և Ջրափի համայնքներում հիմնադրամը աջակցել է մեղվապահության ստեղծման եվ կայացման գործում: